ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Հարությունյանի՝ Կոպենհագեն կատարած այցի մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Կոպենհագեն /Դանիայի Թագավորություն/

2018թ. մայիսի 21-ից 23-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Կոպենհագենի էներգաարդյունավետության կենտրոն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն էներգաարդյունավետության համաշխարհային ֆորումին:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Քննարկվել է Հայաստանում էներգաարդյունավետության և էներգախնայողության բնագավառներում ընթացիկ իրավիճակը և ծրագրերը, տնտեսության բոլոր բնագավառներում էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումները ներդնելու և ընդլայնելու նպատակով հնարավոր ներդրումների ներգրավումը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ֆորումի ժամանակ մասնակցել և ելույթ եմ ունեցել էներգաարդյունավետության ներդրումների խթանմանն ուղղված քննարկումներին, որտեղ ներկայացրել եմ հայկական փորձը և հետագա խթանիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկներ: Բացի քննարկումներից, ունեցել եմ նաև երկկողմ հանդիպումներ Ռուսաստանի Դաշնության էներգետիկայի փոխնախարար Անտոն Անյուցինի, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման փոխնախարար Ռոմեո Միկաուտաձեի և «Քեմբրիջ Էկոնոմետրիկս» ընկերության ներկայացուցիչների հետ: Ներկայացրել եմ Հայաստանի փորձը արևային կայանների կառուցման մրցույթների ոլորտում և քննարկել ենք փորձի փոխանակման նպատակով երկկողմ այցելությունների կազմակերպումը: Միաժամանակ «Քեմբրիջ Էկոնոմետրիկսին» առաջարկել եմ, որպեսզի առաջարկի մակրոտնտեսական մոդել, որով հնարավոր կլինի գնահատել էներգաարդյունավետության ներդրումների ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա: ՄԱԿ-ի եւ Եվրամիության բազմաթիվ պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ քննարկել ենք Հայաստանում էներգետիկայի ոլորտում իրականացվող ծրագրերի ընթացքը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ